# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.11.2021թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**

**թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/80**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռավանի համայնքապետարանի ներկայացուցիչ՝

Ա. Առաքելյանի (լիազորագիր՝ տրված 01.11.2021թ.),

քննելով ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռավանի համայնքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար «Քանաքեռավան համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-Ի գույքի կահավորման ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀԿՄՔՀ-ԳՀԱՊՁԲ-21/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «Առկտուր» ՍՊԸ-ի կողմից 26.10.2021թ. ներկայացված (27.10.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/80 բողոք), պարզեցի հետևյալը.

1. **<u>«Առկտուր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Առկտուր» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 26.10.2021թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Առկտուր ՍՊԸ-ն /հվհհ 00056517/ ներկայացնում է բողոք ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռավանի համայնքապետարանի թիվ ՀՀԿՄՔՀ-ԳՀԱՊՁԲ-21/21 ծածկագրով ընթացակարգի կապակցությամբ:

Բողոքը ներկայացված անձի անվանումը

«Առկտուր» ՍՊԸ-ն ի դեմս Ընկերության տնօրեն Արմեն Սաֆարյանի / անձնագիր AT 0355688, տրված 004-ի կողմից 15.01.2020թ,

Պատվիրատու ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռավանի համայնքապետարան,

Բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան «Քանաքեռավան համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի գույքի կահավորման ապրանքների մատակարարում ՀՀԿՄՔՀ-ԳՀԱՊՁԲ-21/21,

Վեճի առարկան- Առկտուր ՍՊԸ-ն, ՀՀԿՄՔՀ-ԳՀԱՊՁԲ-21/21 ծածկագրով ընթացակարգին մասնակցելու համար, Քանաքեռավանի համայնքապետարանի հասցեով 24.09.2021թ.-ին փոստային առաքմամբ իրականացրել է գնանշման ընթացակարգի իր մասնակցության փաթեթի առաքումը: Մրցույթի փաթեթների բացումը պետք է տե ղի ու նե նար 29.09.2021թ ժամը 12:00-ին: Ըստ Հայփոստ ՓԲԸ-ի տվյալների մեր փաթեթը հանձնվել է պատվիրատուին 29.09.2012թ. ժամը 11:59-ին: Այդ է վկայում նաև 01.10.2021 11:06:58-ին հրապարակված թիվ 2 արձանագրությունը, որում հանձնաժողովը ֆիքսում է, որ ժամը 11:59-ին մեր փաթեթը հանձնվել է համայնքապետարանին: Արդյունքում Առկտուր ՍՊԸ -ի փաթեթը չի գրանցվել, չի բացվել և ընկերությանը չի տրվել հնարավորություն մասնակցել մրցույթի ընթացակարգին:

Սույնով բողոքում ենք նշված ընթացակարգի հանձնաժողովի գործողությունները և պահանջում չեղյալ համարել ընթացակարգը կամ վերագնահատել մրցույթի արդյունքները՝ բոլոր մասնակիցների ներկայությամբ:

պատվիրատուի անվանումը և հասցեն-- ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնք, փ. 3, 4-րդ նրբանցք, շենք 2

Բողոքի փաստացի ապացույցները / կցվում են

1. Հայփոստ ՓԲԸ-ի 24.09.2021թ. թիվ՝ DLEO100285606AM կոդով ստացականը

2. Հայփոստ ՓԲԸ-ի թիվ՝ DLEO100285606AM կոդով առաքանու մանրամասները արտատպված www. haypost.am կայքից

3. ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռավանի համայնքապետարանի կարիքների համար ՀՀԿՄՔՀ-ԳՀԱՊՁԲ-21/21 ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստոր Արձանագրություն 2 /էջ1 /

Ներկայացվում են հետևյալ փաստաթղթերի պատճենները

1. Հայփոստ ՓԲԸ-ի 24.09.2021թ. թիվ՝ DLE0100285606AM կոդով ստացականը

2. Հայփոստ ՓԲԸ-ի թիվ՝ DLE0100285606AM կոդով առաքանու մանրամասները արտատպված www. haypost.am կայքից

3. ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռավանի համայնքապետարանի կարիքների համար ՀՀԿՄՔՀ-ԳՀԱՊՁԲ-21/21 ծածկագրով գնում կատարելու ընթացակալգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի Արձանագրություն 2 /էջ1/

4. բողոքարկման 30.000 դրամ վճարի վճարման թիվ 1153 գործառնումյան հանձնարարականի պատճեն

Բողոքի իրավական հիմքերը-ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ N 526 որոշման համաձայն գնումների գործընթացի բողոքարկման /հոդված 46, 1 և 3 կետեր/ համաձայն խախտվել է Առկտուր ՍՊԸ-ի իրավունքները, որի հետևանքով կազմակելպությանը հասցվել է խախտվել է»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է չեղյալ համարել ընթացակարգը կամ վերագնահատել մրցույթի արդյունքները՝ բոլոր մասնակիցների ներկայությամբ:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ԳԲՔԱ-ՆԳ-2021/80 բողոքի քննության նպատակով 26.10.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**2. <u>ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռավանի համայնքապետարանի կողմից ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>**

ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռավանի համայնքապետարանը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 08.10.2021թ. թիվ 796-21 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 06.10.2021թ. գրության հայտնում ենք, որ 29.09.2021թ. /ըստ հայփոստի աշխատակցի ժամը 11:59/ Քանաքեռավանի համայնքապետարան է հանձնվել Քանաքեռավանի համայնքապետարանին հասցեագրված տարբեր ծրարներ, սակայն չի

հայտնել, որ ծրարներից մեկը ՀՀԿՄՔՀ-ԳՀԱՊՁԲ-21/21 ծածկագրով հայտ է: Մրցույթի ավարտից հետո ծրարները ուսումնասիրելուց պարզվել է, որ ծրարներից մեկը «Առկտուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀԿՄՔՀ-ԳՀԱՊՁԲ-21/21 մրցույթի հայտն է: Ելնելով վերոգրյալից հայտնում ենք, որ «Առկտուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը անհիմն է»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 26.10.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված դիրքորոշումը:

**3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/80 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

ԳԲՔԱ-ՆԳ-2021/80 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռավանի համայնքապետարանի կարիքների համար «Քանաքեռավան համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-Ի գույքի կահավորման ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀԿՄՔՀ-ԳՀԱՊՁԲ-21/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:
2. Գնանշման հարցման մասին հայտարարությամբ նախատեսվել է, որ հայտերի բացումը տեղի կունենա ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնք, փ.13, 4-րդ նրբանցք, շենք 2 հասցեում, 29.09.2021թ. ժամը 12:00-ին:

**4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Առկտուր» ՍՊԸ-ի կողմից 26.10.2021թ. ներկայացված բողոքը՝ կից փաստաթղթերով, ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռավանի համայնքապետարանի դիրքորոշումը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

***<u>Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:</u>***

Օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝

1. Մասնակիցը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: ***<u>Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով:</u>*** (...)

2. Փաստաթղթային ձևով հայտը ներկայացվելու դեպքում մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձում է այն ներկայացնողը: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և հրավերում նշված թվով պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

(...)

4. Հայտերը քարտուղարը գրանցում է գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով այդ մասին տրվում է տեղեկանք:

(...)

Օրենքի 33-րդ հոդվածի համաձայն՝

1. Հայտերը բացվում են հրավերում նշված օրը, ժամին և վայրում՝ հայտերի բացման նիստում: Հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու

վերջնաժամկետին: Փակ մրցույթի դեպքում հայտերը հրավեր ստացած բոլոր մասնակիցների գրավոր համաձայնության դեպքում կարող են բացվել մինչև հրավերում նշված ժամկետը լրանալու օրը:

2. Հայտերի բացման նիստում հրապարակվում են՝

1) հայտ ներկայացրած յուրաքանչյուր մասնակցի անվանումը (անունը).

2) տեղեկություններ՝ հայտեր պարունակող ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ.

3) տեղեկություններ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ.

4) տեղեկություններ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու մասին.

5) յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը՝ տառերով և թվերով արտահայտված.

6) տեղեկություններ՝ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների մասին:

(...)

Այսպես, ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռավանի համայնքապետարանի կարիքների համար «Քանաքեռավան համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-Ի գույքի կահավորման ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀԿՄՔՀ-ԳՀԱՊՁԲ-21/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Գնանշման հարցման մասին հայտարարությամբ նախատեսվել է, որ հայտերի բացումը տեղի կունենա ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնք, փ.13, 4-րդ նրբանցք, շենք 2 հասցեում, 29.09.2021թ. ժամը 12:00-ին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.09.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Առկտուր» ՍՊԸ-ն իր հայտն ուղարկել է Հայփոստի միջոցով, վերջինիս աշխատակցուհին 29.09.2021թ. ժամը 11:59-ի սահմաններում «Առկտուր» ՍՊԸ-ի ծրարը պատշաճ ձևով չի ներկայացրել հայտը գրանցողին՝ այլ թողել է հայտը գրանցողի սեղանին: Հայտերը գրանցողը այն չի նկատել և չի գրանցել գրանցամատյանում: Տվյալ փաթեթը նկատվել է մրցույթի ավարտից հետո, որը գնահատող հանձնաժողովը հետ է վերադարձրել մասնակցին:

Ընկերության կողմից ներկայացվել է ***«Հայփոստ» ՓԲԸ-ի թիվ 00011937 ստացականը, համաձայն որի «Առկտուր» ՍՊԸ-ի կողմից թիվ 596715 առաքանին (կոդ՝***

***DLEO100285606AM, ստացող՝ Քանաքեռավանի համայանքապետարան) «Հայփոստ» ՓԲԸ-ին հանձնվել է 24.09.2021թ. ժամը 13:18-ին, իսկ առաքանու մանրամասների համաձայն՝ այն հանձնվել է հաճախորդին 29.09.2021թ. ժամը 11:59-ին, այսինքն գնանշման հարցման հայտարարությամբ սահմանված ժամկետի պահպանմամբ:***

***Այսպիսով՝ վերոգրյալ փաստական հանգամանքների ուժով՝ հաստատվում է «Առկտուր» ՍՊԸ-ի կողմից հայտ պարունակող ծրարը մինչև հայտերի բացման նիստը, գնանշման հարցման հայտարարությամբ սահմանված ժամկետում ներկայացված լինելու հանգամանքը, որպիսի պայմաններում Ընկերության հայտը հայտերի բացման նիստի ընթացքում չհայտարարելն ու չգնահատելն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից իրավաչափ չէ և վերջինս իր ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում խախտել է Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջը, այն է՝ զրկել է Ընկերությանն իրեն ընձեռնված գնման գործընթացին մասնակցելու իրավունքն իրացնելու հնարավորությունից:***

Նման պայմաններում գտնում եմ, որ «Առկտուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Առկտուր» ՍՊԸ-ի կողմից 26.10.2021թ. ներկայացված բողոքը բավարարել.

Պարտավորեցնել «ՀՀԿՄՔՀ-ԳՀԱՊՁԲ-21/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարելու «ՀՀԿՄՔՀ-ԳՀԱՊՁԲ-21/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**